AEB ARMECONOMBANK ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 33.2-08/140

Digitally signed by PETROSYAN VAGHARSHAK 2314890418

«14» ապրիլի 2023թ.

# ԵՐԱՇԽԻՔ

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանը** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/103** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ԼԻԼԻԹ-87» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **3,540,000 /երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի կողմից **ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/103** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված իննսուն աշխատանքային օր՝ մինչև **08.09.2023թ ներառյալ**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն՝ Ա. Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ՝ Մ.Պողոսյան